



Առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարող տնտեսավարող սուբյեկտների աջակցության ծրագիր

1. Ծրագրի մասին կարճ նկարագրություն. ի՞նչ նպատակ ունի, ի՞նչ աջակցություն է իրենից ներկայացնում:

Նախագծի նպատակը 2024 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-285-Ն օրենքի գործողությամբ պայմանավորված՝ առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարող տնտեսավարող սուբյեկտների մոտ 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա ապրանքային մնացորդները 2025 թվականի հունվարի 1-ից հետո իրացնելու պարագայում առաջացող հարկային բեռի համաչափությունն ապահովելն է՝ ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով: Նախատեսվում է տրամադրել աջակցություն պետական բյուջե վճարման ենթակա շրջանառության հարկի այն մասի չափով, որը գերազանցում է իրացման շրջանառության 5%-ը: Իսկ այն հարկ վճարողներին, որոնք կունենան հարկից չնվազեցված և փոխհատուցված գումար, փոխհատուցվելու է նաև պետական բյուջե վճարման ենթակա շրջանառության հարկի և իրացման շրջանառության 1.5 տոկոսը կազմող գումարի դրական տարբերությունը: Կարևոր է նշել, որ այն չի կարող լինել ավելին, քան չնվազեցված գումարի 1.375-ապատիկը:

2. Ովքե՞ր կարող են դիմել:

Աջակցությունը տրամադրվում է առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարող տնտեսավարող սուբյեկտներին, եթե միաժամանակ բավարարված են հետևյալ պայմանները.

- 1) 2024թ. իրականացրել է առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն.
- 2) 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և աջակցության ստացման հաշվետու եռամսյակներում հանդիսացել է բացառապես շրջանառության հարկ վճարող.
- 3) դիմումի ներկայացման օրվան նախորդող օրվա դրությամբ ամբողջությամբ կատարել է վճարման ենթակա շրջանառության հարկի պարտավորությունները.



- 4) եռամսյակի արդյունքներով առևտրական գործունեությունից շրջանառության հարկի գումարը գերազանցում է այդ գործունեության մասով ձևավորվող իրացման շրջանառության 5 տոկոսը կամ հարկ վճարողի մոտ առկա է նախորդ եռամսյակներում կատարված ծախսերի մասով շրջանառության հարկի գումարից չնվազեցված և փոխանցված գումար:
- 5) հարկային մարմին է ներկայացրել առևտրական գործունեության մասով 2025թ. հունվարի 1-ի դրությամբ ապրանքային մնացորդի մասին տեղեկատվություն:

3. Դիմելու կարգը և հետագա քայլերը:

1. Ծրագրի շրջանակում աջակցություն ստանալու համար տնտեսավարող սուբյեկտը հարկային մարմնի compensation@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացնում է դիմում՝ համաձայն [Ձև N2](#)-ի:

**Սույն կետով նախատեսված դիմումը (այդ թվում՝ ճշտված) 2025 թվականի 1-ին եռամսյակի համար կարող է ներկայացվել մինչև 2025 թվականի մայիսի 10-ը ներառյալ, իսկ 2025 թվականի 2-րդ եռամսյակի համար՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը ներառյալ:*

2. Հարկային մարմնի կողմից դիմումը ստանալուց հետո՝ 1 ամսվա ընթացքում, ստուգվում են շահառուների ցանկում ընդգրկվելու պայմաններին համապատասխանելու հիմքերը: Շահառուների ցանկում ընդգրկվելու պայմաններին չհամապատասխանելու դեպքում դիմումը մերժվում է, որի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտը ծանուցվում է 1 ամսվա ընթացքում՝ էլեկտրոնային փոստի հասցեին հետադարձ ծանուցման միջոցով:

**Դիմումի մերժման հիմք է հանդիսանում նաև առևտրական գործունեության մասով 2025թ. հունվարի 1-ի դրությամբ ապրանքային մնացորդի մասին հարկային մարմին տեղեկատվություն չներկայացնելը:*

3. Վճարման հանձնարարականը հարկային մարմնի կողմից գանձապետարան ներկայացվելու օրվանից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, աջակցության գումարը գանձապետարանի կողմից փոխանցվում է շահառուի բանկային հաշվին: 4. Այն դեպքում, երբ տնտեսավարող սուբյեկտի կողմից աջակցության գումարը ստանալուց հետո ներկայացվում է շրջանառության հարկի ճշտված հաշվարկ, որի հետևանքով արձանագրվում է ավել վճարված աջակցության գումար, տնտեսավարող սուբյեկտն ավել ստացված աջակցության գումարը ճշգրտման օրվան հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է պետական բյուջե՝ գանձապետարանի՝ այդ նպատակով բացված համապատասխան հաշվին:



4. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ:

Նախագծով սահմանված [Ձևին](#) համապատասխան դիմում և առևտրական գործունեության մասով 2025թ. հունվարի 1-ի դրությամբ ապրանքային մնացորդի մասին տեղեկատվություն:

5. Կոնտակտային տվյալներ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

secretariat@petekamutner.am

+374 (60) 84 - 44 - 44